



## ԲՆՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### ՆԱԴԵԺԴԱ ԱՖՅԱՆ

ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի  
ասիստենտ, տնտեսագիտության թեկնածու

### ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ԸՆՏ ՏԵԽՆԱԾԻՆ ԾԱՆՐԱԲԵՈՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԻ

Հոդվածում ներկայացվել են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման չափանիշներն ըստ տեխնածին ծանրաբեռնվածության ցուցանիշի: Տարբերակվել և վերլուծվել են շրջակա միջավայրի ֆոնային աղտոտվածության ցուցանիշի և աղտոտման առանձին չափանիշների հաշվառման առանձնահատկություններն ըստ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման տարածաշրջանային ցուցանիշների: Եզրակացվել է, որ որոշումների ընդունման օրեւկտիվության ապահովման համար անհրաժեշտ է ստեղծել տարածաշրջանային էկոլոգիական մշտադիտարկման հանրամատչելի տեղեկատվական բազաներ:

**Հիմնաբառեր.** տեխնածին ծանրաբեռնվածության մակարդակ, աղտոտման ինտեգրատիվ գնահատում, ֆոնային աղտոտվածություն, տեխնածին ծանրաբեռնվածության տարածաշրջանային ցուցանիշ, էկոլոգիական վտանգ, սահմանային թույլատրելի խսություն, մշտադիտարկումների միասնական համակարգ

JEL: Q5, Q56, Q59

Տնտեսության առանձին ճյուղերի զարգացման տեմպերն ընդլայնում են մարդածին ազդեցությունների տարածական սահմանները, որն, իր հերթին, բարձրացնում է տարածաշրջանի տեխնածին ծանրաբեռնվածության նակարդակը: Ելնելով դրանից՝ ներկայումս էակես մեծացել է հետաքրքրությունը շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) ընդհանուր մեթոդաբանության գիտական հիմքերի մշակման նկատմամբ:

Անհրաժեշտ է նշել, որ ուսումնասիրությունների նոր փուլում, այնուամենայնիվ, որոշ չափով պահպանվում են ազդեցությունների գնահատման ավանդական մոտեցումները, այսինքն՝ անտեսվում են ռիսկի, վնասների և վտանգների գնահատումները: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ցուցանիշների և ազդեցության աղբյուրների ընտրության արդյունքում հիմնականում գնահատվում են բնապահպանական և սոցիալական հետևանքները, իսկ տնտեսական գնահատումները մեծ մասամբ սահմանափակվում են հիմնական ծախսերի հաշվառմանք, բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների (նվազ ներկայացնելու նպատակով) հաշվարկմանք:

Ուսումնասիրություններում անդրադարձում են տեխնածին ազդեցությունների առանձին աղբյուրների և ռեցիպենտային (ազդեցություն կրող) ոլորտներին վերաբերող վնասների և վտանգների՝ արժեքային ու որակական հարաբերական ցուցանիշներով գնահատման հարցերին<sup>1</sup>: Հիմք ընդունելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ավանդական մեթոդները՝ որոշ մասնագետներ շրջանցում են տարածքի աղտոտման ինտեգրատիվ գնահատումները, անտեսելով տարբեր միջավայրերում տարատեսակ աղտոտիչների բազմապատկման (մուլտիպլիկատիվ) սկզբունքը<sup>2</sup>: Այսինքն՝ տարածաշրջանի կամ որևէ բնակավայրի շրջակա միջավայրի վրա մարդածին ազդեցությունների համակարգումն ու դրանց՝ ըստ ռեցիպենտային ոլորտների դասակարգումը հնարավորություն է կտա գնահատելու տարածաշրջանի տեխնածին ծանրաբեռնվածության մակարդակը: Այս գործընթացի հիմքում ազդեցությունների դետալացումն է, որն էլ, իր հերթին, համալրվում է համապատասխան ցուցանիշներով<sup>3</sup>: Ազդեցությունների ինտեգրատիվ գնահատման առաջնային ցուցանիշներից է տեխնածին ծանրաբեռնվածության տարածաշրջանային ցուցանիշը<sup>4</sup>, որը հաշվառում է.

- մարդածին ազդեցության աղբյուրները և գործոնները,
- սանիտարահիգիենիկ և բնապահպանական նորմավորման (ՍԹԽ, ՍԹՄ) չափանիշները,
- տարածքի երկրաքիմիական և լանդշաֆտային առանձնահատկությունները:

Ենթադրվում է, որ նման մոտեցմամբ հնարավոր կլինի որոշել յուրաքանչյուր տեխնածին օբյեկտի ներդրման ազդեցության մասնաբաժինն ընդհանուրի մեջ: Ընդունելով այս մեթոդաբանությունը՝ առավել կարևոր է որակի հարաբերական ցուցանիշների հաշվարկով որոշել շրջակա միջավայրի կամ տարածաշրջանի էկոլոգիական վտանգի մակարդակը (ներառյալ փաստացի վնասը և սպասվող ռիսկը): Միաժամանակ, արժեքային ցուցանիշներով հաշվարկը հնարավորություն կտա գնահատելու անմիջական (աղտոտման) և սոցիալական ու էկոլոգիական վնասների արժեքները:

<sup>1</sup> Տես ԵՀԳԳ արևելյան երկրների օդի որակի կառավարում. «Լավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաբանականների մշակում» պիլոտային ծրագիր, 2013:

<sup>2</sup> Տես ՕНԴ-86. Методика расчета концентраций в атмосферном воздухе вредных веществ, содержащихся в выбросах предприятий. Госкомгидромет. Л., "Гидрометеоиздат", 1987:

<sup>3</sup> Տես Վորобьев А.Е., Каргинов К.Г., Ананикян С.А., Одунцовова Е.С., Оценка воздействия на окружающую среду предприятий горной промышленности. М., "Экологическая экспертиза", №3, 2002, էջ 96–104:

<sup>4</sup> Տես Գյուսева Г.В., Зաиқա Е.Ա., Դայման Ս.Յ., Բուхгалթեր Լ.Բ., Оценка воздействия производств на природные комплексы. М., "Экологическая экспертиза", №3, 2002, էջ 91–95:

Մեթոդական այս մոտեցմանը համահունչ են հատկապես այն ուսումնասիրությունները, որոնք կապված են շրջակա միջավայրի մշտադիտարկմամբ ճգրտված որակական ցուցիչների ճիշտ ընտրության հետ: Դրանց հիման վրա հնարավոր է էկոլոգիական, սոցիալական և տնտեսական ռիսկերի կառավարման նոր գործիքների մշակումը: Այս դեպքում ևս անհրաժեշտ է զգուշությամբ ընտրել ցուցիչները, քանի որ դրանց շարքից հարկ է առանձնացնել առավել մեծ տեղեկատվական կշիռ ունեցող բնութագրերը: Ցավոք, ընդհանուր մեթոդաբանության այս մասով ևս դիտվում են տերմինաբանական կամայականություններ, ինչը հաճախ խոչընդոտում է մեթոդների համարժեք մշակմանը և վնասների ու ռիսկերի կառավարմանը: Հետազոտությունների ժամանակակից փուլում արդիականացված են մեթոդական տառածայնությունների մեղմացումը և վերացումը, ինչպես նաև մշտադիտարկումների և ռիսկի կառավարման տեղեկատվական ձկուն համակարգերի ստեղծումը:

Վերլուծելով ՇՄԱԳ-ի օրենսդրական դաշտը և գնահատելով կիրառման գործառնական առանձնահատկությունները՝ կարելի է փաստել, որ դեռևս լիովին բացահայտված չեն այդ գործընթացի ֆունկցիոնալ հնարավորությունները և մեթոդաբանության կատարելագործման գերակա ուղղությունները: Հարցի տեսականորեն ապահովված լինելն առավել առաջնային է՝ հատկապես ռազմավարական փաստաթղթերի փորձաքննության համար:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացը, լինելով որոշումների ընդունման ժամանակակից ազդեցիկ գործիք, գիտական արժեքություն է ստանում, այսպես կոչված, շրջակա միջավայրի հետ համատեղելիության ստուգման գործողություններում: Դրանք առավել զարգացած են Բրազիլիայում, Գերմանիայում և Ուստաստանում<sup>5</sup>: Գործողությունները կանոնակարգված են համապատասխան օրենսդրական ակտերով, համաձայն որոնց շրջակա միջավայրում պլանավորվող գործունեության համատեղելիության ստուգումը պետք է ընդգրկված լինի պետական այն մարմնների պատասխանատվության ոլորտում, որոնք որոշում են կայացնում նախագծի ապագայի վերաբերյալ:

Նշենք, որ 85/337 EWG և ԵԱՍ 2010/75 դիրեկտիվների համապատասխանության տեսանկյունից շրջակա միջավայրի հետ համատեղելիության ստուգման գործընթացի կիրառումը բախվեց բազում դժվարությունների՝ կապված տեղեկատվության անբավարարության և արդյունքների գնահատման չափանիշների գիտական անապահովվածության հետ: Այնուամենայնիվ, ակնհայտ տարբերությունը «շրջակա միջավայրի աղտոտում» հասկացության իրավաբանական սահմանումների միջև է<sup>6</sup>: Նախ՝ տարածաշրջանը դիտարկվում է որպես միասնական համակարգ, որտեղ առանձնացվում են աղտոտման աղբյուր օբյեկտները և դրանց գործակից չափանիշների համատեղելիությունը ռեցիպիտացին ոլորտների նկատմամբ: Օրինակ՝ թափոնների կառավարման ոլորտում աղբ այրող գործարանի և պոլիգոնների կառուցման նպատակով տարածքի ընտրության դեպքում Գերմանիայում օգտագործվում են համատեղելիության գնահատման երկու կարգի չափանիշ-

<sup>5</sup>Տես **ԱՅ'Սաբեր, Մյոլեր-Պլանտենբերգ Կ., Բետեյոմ Ա.Յ.**, Ответственность перед будущим: Оценка воздействия на окружающую среду в Бразилии, Германии и России. М., “Экологическая экспертиза”, №4, 1999, էջ 2–10:

<sup>6</sup>Տես Արային 2000/60/ЕС դիրեկտիվը, բափոնների 75/442/ЕЕС դիրեկտիվը, արդյունաբերական արտանետումների 2010/75/ЕУ դիրեկտիվը:

ներ<sup>7</sup>: Ընդ որում, առաջին կարգի չափանիշները (13) կարելի է համարել մոտավոր բնույթի, իսկ երկրորդ կարգի չափանիշները (6) ծառայում են դետալացված վերլուծության համար: Նման մոտեցումը արդարացված է, քանի որ համապատասխանում է էկոլոգիական, սոցիալական և տնտեսական շահերի համարժեքության սկզբունքներին և կողմնորոշված է գործունեության էկոլոգիական անվտանգության հաղթահարմանը: Այսինքն՝ կարևորվում է ռիսկի կառավարման և վնասների կանխարգելման բազմամակարդակ և միասնական մեթոդական մոտեցման մշակումը գնահատման գործընթացներում:

«Բնության պահպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության հիմունքները» օրենքի 2006 թվականին անվավերությունը ստիպեց շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մեթոդաբանությունն իրականացնել առանձին օրենքների հիման վրա, որն էլ տարանցաւեց տարածքային էկոլոգիական միասնականության ընկալումը: Բացառություն են կազմում առանձին օրենքներում դեռևս առկա տեխնածին ծանրաբեռնվածության տարածքային միասնական ցուցանիշի առանձին բաղադրիչները՝ ֆոնային աղտոտվածությունը<sup>8</sup>, աղտոտվածության ֆոնային մակարդակը<sup>9</sup>, որոշակի վերապահումով, սակայն բնապահպանական վճարների հաշվարկվող դրույքաչափերի կրկնապատկումը (Սևանա լճի ջրահավաք ավազան, Հրազդանի կիրճի տարածքում Հրազդան և Գետառ գետեր վնասակար նյութերի և միացությունների արտահոսքեր իրականացնող իրավաբանական և ֆիզիկական անձանց համար) և 1,5 անգամ ավելացումը (Շրեսան քաղաքում, ազգային պարկերի տարածքներում օդային ավազան վնասակար նյութերի արտանետման ամրակայված աղբյուրներ ունեցող իրավաբանական և ֆիզիկական անձանց համար<sup>10</sup>), որոնք ևս դասվում են տեխնածին ծանրաբեռնվածության տարածքային ցուցանիշների շարքին:

Գնահատման վերջին տարբերակը հաջողությամբ կիրառվում է Ռուսաստանի Դաշնության որոշ պահպանվող տարածքների պարագայում: Այն նպատակահարմար է փորձարկել նաև Հայաստանի Հանրապետությունում՝ հատկապես այնպիսի մարգերում, որտեղ զարգացած է լեռնարդյունահանման արդյունաբերությունը, օրինակ՝ Սյունիքում և Լոռիում, քանի որ շրջակա միջավայրի և հասարակական առողջության ազդեցության գնահատումը առավել արդիական է հենց լեռնային արդյունաբերական ձեռնարկությունների համար:

Շրջակա միջավայրի վրա տեխնածին բեռնվածության աճին նպաստում է նաև Հայաստանում արտադրված և իրացված, բնական միջավայրին վնաս պատճառող և բնապահպանորեն նշորմավորված ապրանքների և թափոնների քանակական աճը: Դրանց շարքում են մասնավորապես՝ պոլիէթիլային իդերը, կապարային կցորդիչները, ագրոշիֆերը, ներկերը, դետերգենտները,

<sup>7</sup> Տես Յումմեր Ռ., Պроверка совместимости с окружающими средой в сфере устранения отходов-практический пример. М., «Экологическая экспертиза», N4, 1999, էջ 33–43:

<sup>8</sup> Տես ՀՀ կառավարության «Մթնոլորտային օդի աղտոտող նյութերի սահմանային թույլատրեկի արտանետումների նորմատիվների մշակման ու հաստատման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի մարտի 30-ի N 192 և 2008 թվականի օգոստոսի 21-ի N 953 Ն որոշումներն ուժը կորցրած ձանձելու մասին» 2012 թ. դեկտեմբերի 27-ի N1673 որոշումը:

<sup>9</sup> Տես «Հողերն աղտոտումից պահպանելու ընդհանուր պահանջների, հողն աղտոտող վնասակար նյութերի ցանկի և հողերի աղտոտվածության աստիճանի գնահատման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 1277-Ն որոշումը, 24.08.2006:

<sup>10</sup> Տես ՀՀ օրենքը «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին», 2006:

վառելիքաբսուրպային յուղերը և այլն: Դրանց վերաբերյալ գիտական կամ վիճակագրական տվյալները սահմանափակվում են միայն վնասների հատուցման արձանագրությունների քանակական բաշխվածության ցուցանիշներով՝ ըստ բնապահպանական ուղղությունների և մարզերի: Նշվում է վնասի հատուցման գումարը այն դեպքում, երբ անհայտ է մնում վնասի տեսակը (տնտեսական, էկոլոգիական, սոցիալական) և բացարձակ մեծությունը:

Շրջակա միջավայրի վրա ծանր մետաղների ազդեցությունների գերակայող մակարդակները որոշելու համար կարելի է մշակել, այսպես կոչված, «մարկերային տարր», ըստ որի կզնահատվի տվյալ վնասակար նյութի տեխնածին ծանրաբեռնվածության տարածքային չափանիշը: Հատկանշական է, որ որպես «մարկերային տարր» կարելի է դիտարկել կապարը (Cu<Zn<Pb<As): Այսպիսի տարանջատման օգնությամբ կմշակվի տարածաշրջանային մարկերային տարրերի ցանկ՝ ըստ բնական ոլորտների, որն էլ թիրախային ձևով կզսպի տեխնածին ազդեցության մակարդակը:

Ազդեցության գործոններից անհրաժեշտ է հատուկ նշել աղմուկը, վիրացիան, էլեկտրամագնիսական ձառագայթումը և շրջակա միջավայրի ռադիոակտիվ աղտոտումը: Պարզվում է, որ միայն ռադիոակտիվ աղտոտումն է ենթարկվում մշտադիտարկումային ուսումնասիրությունների, մասնավորապես՝ կոշտ և հեղուկ ռադիոակտիվ թափոնների քանակության վերահսկողության միջոցով: Դրանց ընդհանուր ծավալը, համապատասխանաբար, մոտ է 5000 և 3000 խմ-ին: Աղմուկի, վիրացիայի և էլեկտրամագնիսական ձառագայթման ազդեցության մշտադիտարկումն ընդհանրապես դուրս է մնացել պետական բնապահպանական վերահսկողության համակարգի ուշադրությունից, նորմավորված չեն ազդեցության մակարդակները: Վտանգի աղբյուր են հատկապես ռեկուլտիվացված և գործող պոչամբար կարելի է որակել որպես առավելագույն ռիսկի աղբյուր՝ գտնվելով սեյսմիկ ռիսկի ակտիվ գոտիներում<sup>11</sup>:

Սյունիքի և Լոռու մարզերի Կապան, Քաջարան, Ալավերդի և Ախթալա քաղաքներում արձանագրվել է մթնոլորտային օդի, ջրի և հողերի ծանր մետաղների իոններով աղտոտվածության (սնդիկ, մկնդեղ, ցինկ, կապար, պղինձ և այլն) սահմանային թույլատրելի խտությունը 1,2–19,3 անգամ գերազանցող մակարդակ<sup>12</sup>: Առավել տագնապալի է այն փաստը, որ թվարկված աղտոտիչները հայտնաբերվել են սննդամթերքում պատճառ դառնալով տարբեր տեսակի առօջական խնդիրների:

Սա առավել խոցելի և հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրներից է, որը կարող է բարձրացնել ընդունվող տնտեսական որոշումների օբյեկտիվության աստիճանը: Այս կապակցությամբ տեղին է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում հրատապ է տարածաշրջանային էկոլոգիական մշտադիտարկման հանրամատչելի տեղեկատվական բազաների ստեղծումն ու զարգացումը, որոնք էլ, իրենց հերթին, կարևոր նախադրյալ կդառնան Հայաստանում քաղաքակիրք բիզնեսի զարգացման համար:

<sup>11</sup> Տես Շրջակա միջավայրի վիճակը Հայաստանում 2002 թ., Եր., 2003, էջ 59–63: Սեյսմիկ պաշտպանությունը և դրա կազմակերպումը. Գյումրի – Էլորադո, 2002, էջ 7–129:

<sup>12</sup> «Հյումանիտար ռիսկ մետաղներով աղտոտման ռիսկի գնահատում», Եր., 2011, էջ 11–25:

### Օգտագործված գրականություն

1. «Հ կառավարության «Մթնոլորտային օդի աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման ու հաստատման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի մարտի 30-ի N 192 և 2008 թվականի օգոստոսի 21-ի N 953-Ն որոշումներն ուժը կորցրած ձանաչելու մասին» 2012 թ. դեկտեմբերի 27-ի N1673 որոշումը:
2. «Հողերն աղտոտումից պահպանելու ընդհանուր պահանջների, հողն աղտոտող վնասակար նյութերի ցանկի և հողերի աղտոտվածության աստիճանի գնահատման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 1277-Ն որոշումը, 24.08.2006:
3. «Հ օրենքը «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին», 2006:
4. Շրջակա միջավայրի վիճակը Հայաստանում 2002 թ., Եր., 2003:
5. Սեյսմիկ պաշտպանությունը և նրա կազմակերպումը. Գյումրի – Ելրորադր, 2002:
6. Ձրային 2000/60/EC դիրեկտիվը, թափոնների 75/442/ECC դիրեկտիվը, արդյունաբերական արտանետումների 2010/75/EU դիրեկտիվը:
7. ԵՀՊԳ արևելյան երկրների օդի որակի կառավարում. «Լավագույն հասանելի տեխնոլոգիաներից բխող արտանետումների քանակների և ընտրված բնագավառների համար արտանետումների սահմանային չափաքանակների մշակում» պիլոտային ծրագիր, 2013:
8. ОНД-86. Методика расчета концентраций в атмосферном воздухе вредных веществ, содержащихся в выбросах предприятий. Госкомгидромет, Л., “Гидрометеоиздат”, 1987.
9. Воробьев А. Е., Каргинов К.Г., Ананикян С.А., Одунцова Е.С., Оценка воздействия на окружающую среду предприятий горной промышленности. М., “Экологическая экспертиза”, №3, 2002.
10. Гусева Г.В., Заика Е.А., Дайман С.Ю., Бухгалтер Л.Б., Оценка воздействия производств на природные комплексы. М., “Экологическая экспертиза”, №3, 2002.
11. Аб'Сабер, Мюлер-Плантенберг К., Ретеюм А.Ю., Ответственность перед будущим: Оценка воздействия на окружающую среду в Бразилии, Германии и России. М., “Экологическая экспертиза”, №4, 1999.
12. Зуммерер Ш., Проверка совместимости с окружающей средой в сфере устранения отходов-практический пример. М., “Экологическая экспертиза”, №4, 1999.

**НАДЕЖДА АФЯН**

Ассистент кафедры экономики  
природопользования АГЭУ,  
кандидат экономических наук

**Оценка воздействия на окружающую среду по антропогенному индексу нагрузки.** – В статье представлены критерии оценки воздействия антропогенной нагрузки на окружающую среду. Проанализированы характерные особенности показателей фонового загрязнения окружающей среды и особенностей учета уровня загрязнения в соответствии с региональными показателями. Сделан вывод о том, что для повышения объективности принятия решений необходимо создать широкий спектр региональных баз данных экологического мониторинга.

**Ключевые слова:** уровень техногенной нагрузки, комплексная оценка загрязнения, фоновое загрязнение, региональный показатель антропогенной нагрузки, экологическая опасность, предельно допустимая концентрация, единая система мониторинга.

JEL: Q5, Q56, Q59

**NADEZDHA AFYAN**

Assistant at the Chair of Environmental Economics at ASUE,  
PhD in Economics

**Environmental Impact Assessment According to the Anthropogenic Index of Loading.** – The article presents environmental impact assessment criteria for anthropogenic loads. Comparative differentiation and analysis of environmental pollution indicators and individual pollution census peculiarities according to regional indicators for environmental impact assessment have been analyzed. A conclusion has been made that in order to increase the objectivity of decision-making, it is necessary to create a wide range of regional ecological monitoring databases.

**Key words:** Level of technogenic loading, complex assessment of pollution, background pollution, regional indicator of anthropogenic loading, ecological hazard, allowable limit concentration, united system of monitoring.

JEL: Q5, Q56, Q59